

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

17.07.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Վ.Ջաղինյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Կ.Ադամյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզպետի Հոլանդիա կատարած այցի մասին
Ա.Նալբանդյան
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
Ա.Դարբինյան
3. Վրաստան կատարած այցի մասին
Ն. Սարգսյան
4. ՀՀ Վարչապետի Լոռու մարզ կատարած այցի ժամանակ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին
(Հ. Թադևոսյան, Մ. Սայադյան, Ս. Լամբարյան, Ա. Ջանազյան, Լ. Ասլանյան),
Հ. Մկրտչյան
5. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին.
Ա. Բեջանյան
6. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
Գ. Հակոբյան
7. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

ա/ Սեփական եկամուտների հավաքագրման բարելավման նպատակով՝ ըստ տարածքների և համայնքների համեմատական վերլուծություն կատարել, վեր հանել հավաքագրման մակարդակի իջեցման կամ չապահովման պատճառները և ներկայացնել առաջարկություն:

բ/ Առաջարկել համայնքների ղեկավարներին 2018թ. բյուջեների պլանավորման ժամանակ կիրառել իրատեսական ցուցանիշներ և հետևողական լինել բյուջեով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Լոռու մարզի աղբավայրի կառուցման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով համագործակցել մարզի համայնքների և շահագրգիռ կազմակերպությունների հետ, կազմակերպել քննարկումներ և ներկայացնել առաջարկություններ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարել և ներկայացնել տեղեկատվություն մարզի բոլոր այն 58 համայնքների վերաբերյալ, որոնք աղբահանություն են իրականացնում, բյուջեներով նախատեսել են աղբահանության վճարներ և ունեն անհրաժեշտ պայմանագրեր նաև տնտեսավարող սուբյեկտների հետ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և ըստ համայնքների այն հողօգտագործողների վերաբերյալ, ովքեր ունեն պարարտանյութի և սերմացուների նախորդ տարիների պարտքեր:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ